ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 099-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28-Ը ՀՈՒԼԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 13 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 28-ը հուլիսի 2026 թվականի թիվ 13 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 28.07.2026 թվականի թիվ 13 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի մանկապարտեզներին արձակուրդ տրամադրելու մասին:

3. Արենի համայնքի ավագանու 16.01.2026թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2026թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

4. Տեղական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին:

5. Արենի համայնքում 2026 թվականի ուսումնական տարվա առաջին դասարան հաճախող համայնքի 9 բնակավայրերի աշակերտներին գրենական պիտույքներով դպրոցական պայուսակներ նվիրելու համար գումար հատկացնելու մասին:

6. Արենի համայնքի ավագանու 27.05.2026թվականի 075-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

7. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 0,00873հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը և օրինականացված 46,7 քմ հասարակական նշանակության շինությունները, գնման

նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով Վարդան Աշոտի Վարդանյանին օտարելու մասին:

8. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Isuzu մակնիշի շարժական բեմ-բեռնատարը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին:

9. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրի 36-րդ փողոց 10-12 հողամաս հասցեում «ԱՐԵ ՀԱՈՒՍ» Սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից նախատեսվող հասարակական նշանակության շինության կառուցման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 100-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

2026 թվականի օգոստոսի 3-ից 17-ը ներառյալ Արենի համայնքի մանկապարտեզներին տրամադրել արձակուրդ՝ ուսումնական տարվան նախապատրաստվելու, սանիտարահիգիենիկ միջոցառումներ իրականացնելու և աշխատակիցների հասանելիք արձակուրդները տրամադրելու նպատակով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 101-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.01.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 16-ը հունվարի 2026 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2026 թվականի տարեկան բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումները՝

1.Արենիի այլ աղբյուրներից եկամուտներ 38 բաժնի 06 խմբի 00 դասի եկամտատեսակում ավելացնել 282 771 ՀՀ դրամ և ուղղել կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/հոդվածին,

2.Պետական բյուջեից տրամադրող այլ ընթացիկ դոտացիաներ 37 բաժնի 09 խմբի 00 դասի եկամտատեսակում ավելացնել 9 425 712 ՀՀ դրամ և ուղղել գյուղատնտեսություն 04 բաժնի 02 խմբի 01 դասի 4729/այլ նպաստներ բյուջեից /հոդվածին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 102-Ա

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով,Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1.Պետության կողմից պատվիրակված, համայնքի տարածքում իրականացվող շինարարական աշխատանքների շինարարության թույլտվության տրամադրման համար կիրառել արտոնություն՝ պատվիրատուին ազատել սահմանված տեղական տուրքի վճարներից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 103-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ՀԱՃԱԽՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 9 ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐՈՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն

1. Արենի համայնքում 2026թվականի ուսումնական տարվա առաջին դասարան հաճախող համայնքի 9 բնակավայրերի աշակերտներին գրենական պիտույքներով դպրոցական պայուսակներ ձեռք բերելու և նվիրելու համար համայնքի բյուջեից հատկացնել առավելագույնը 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ՝ մեկ պայուսակի հաշվարկով:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին հիմք ընդունել համայնքի բնակավայրերի դպրոցների տնօրենների կողմից հաստատված և ներկայացված ցուցակները:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 104-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.05.2026ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 075-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի ավագանու 27-ը մայիսի 2026 թվականի «Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից, մրցույթով վարձակալությամբ հատկացնելու մասին» թիվ 075-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ 1-ին կետի մեջ <<վարելահող>> բառը փոխարինել <<այլ հողատեսք>> բառերով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 105-Ա

ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ 46,7 ՔՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՐԴԱՆ ԱՇՈՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1.Արենի համայնքի Արփի բնակավայրի Երևանյան խճուղի 2/6 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-012-0142-0016; 0008-ից, հողամասը՝ 0.00873 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա օրինականացված հասարակական նպատակային նշանակության շինությունները՝ 46,7քմ՝ (ավտոտեխսպասարկման կետ՝ 31,9քմ., զուգարան՝ 3քմ., ծածկ՝ 8,8քմ., ծածկ՝ 3քմ.) ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով, օտարել կառուցապատող Վարդան Աշոտի Վարդանյանին:

2 Հաստատել հողամասի և շինությունների համար հաշվարկված գումարները.

1) 0.00873հա բնակավայրերի նշանակության հողամասի արժեքը՝ 69 142 (վաթսունիննը հազար հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ,

2) 1ք.մ.՝ 9252 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված 46,7 քմ հասարակական նշանակության շինությունների համար՝ ընդամենը 432 068 ՀՀ դրամ(չորս հարյուր երեսուներկու հազար վաթսունութ) ՀՀ դրամ,

Ընդամենը՝ 501210 ՀՀ դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 106-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ISUZU ՄԱԿՆԻՇԻ ՇԱՐԺԱԿԱՆ ԲԵՄ-ԲԵՌՆԱՏԱՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 608-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունել համայնքի ղեկավարի առաջարկությունը. Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն Արենիի համայնքապետարանի և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ ձեռք բերված ISUZU FTR Chassis Mobile Stage Truck TL60-S 5.2L Diesel M/T մակնիշի Շարժական բեմ-բեռնատարը միջոցառումների կազմակերպման նպատակով վարձակալությամբ տրամադրելուն:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բեմ-բեռնատարի վարձավճարի չափը սահմանել 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ՝ մեկ օրվա համար, որից՝ 700 000 ՀՀ դրամը բեմի վարձավճար, 300000 ՀՀ դրամը էկրանի վարձավճար: Վերոնշյալ գումարից հատկացվում է աշխատավարձ՝

1) Բեռնատարի վարորդին՝ 25 000 ՀՀ դրամ,

2) Սպասարկող անձնակազմի յուրաքանչյուր աշխատակցին՝ 25 000-ական ՀՀ դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 107-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 36-ՐԴ ՓՈՂՈՑ 10-12 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ «ԱՐԵ ՀԱՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման թիվ 1 հավելվածի 28-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «ԱՐԵ ՀԱՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումի հիման վրա կայացած հանրային լսման արձանագրությունը. Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրի 36-րդ փողոց 10-12 հողամաս հասցեում «ԱՐԵ ՀԱՈՒՍ» Սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից նախատեսվող հասարակական նշանակության շինության կառուցման աշխատանքների իրականացմանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**